ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 84-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 15-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 15-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2026 թվականի ապրիլի 13-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Դիմող) դիմումը: Դիմողը 2026 թվականի ապրիլի 1-ին թիվ ԱՐԴ/0185/01/26 քրեական գործով կայացրել է որոշում «Կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան դիմելու մասին», որով որոշել է.

«Թիվ ԱՐԴ/0185/01/26 քրեական գործով կիրառման ենթակա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված դրույթի սահմանադրակա-նության հարցը որոշելու նպատակով դիմել Հայսատանի Հանրապետության սահմանադրական դատարան»:

2. Ներկայացնելով թիվ ԱՐԴ/0185/01/26 գործի դատավարական նախապատ-մությունը, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

դատարանի առջև պաշտպանության կողմից բարձրացված իրավական հարցերը՝ Դիմողը, վկայակոչելով Սահմանադրության 61, 72 և 79-րդ հոդվածները, ներկայացնելով Սահմանադրական դատարանի դիրքորոշումները, մասնավորապես, նշում է.

«Իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ դիրքորոշումներն ամրագրված են Սահմանադրական դատարանի մի շարք, մասնավորապես, ՍԴՈ-630, ՍԴՈ-753, ՍԴՈ-1270 որոշումներում, որոնցից բխում է, որ Սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքը դիտարկում է որպես Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իրավական պետության և հատկապես վերջինիս կարևորագույն հատկանիշներից՝ իրավունքի գերակայության գլխավոր պահանջներից մեկը, և հիշյալ սահմանդրահիրավական սկզբունքի գործողությունը տարածվում է բոլոր օրենքների վրա՝ անկախ այն հանգամանքից, թե վերջիններս ունեն հիմնական իրավունք սահմանափակող, թե հիմնական իրավունքի իրացումը կարգավորող բնույթ (ՍԴՈ-1357)»:

Ըստ Դիմողի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված իրավադրույթը դատարանի վրա դնում է ուղիղ պարտականություն՝ վերացնել պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշումն այն դեպքում, երբ խնդրո առարկա դատական ակտը դեռևս չի մտել օրինական ուժի մեջ, և որ նման իրավակարգավորումը հանգեցնում է նրան, որ իրավական հետևանքներ է առաջացնում մի դատական ակտ, որը դեռևս ձեռք չի բերել վերջնական և պարտադիր բնույթ, այսինքն՝ գտնվում է դատավարական վերանայման փուլում և կարող է փոփոխվել կամ ամբողջությամբ բեկանվել վերադաս դատական ատյանի կողմից:

Դիմողը գտնում է, որ այսպիսի իրավիճակում իրավական համակարգում ձևավորվում է ներքին հակասություն, «երբ մի կողմից դատական ակտը դիտարկվում է որպես դեռևս չավարտված և վերանայման ենթակա, իսկ մյուս կողմից՝ այն արդեն իսկ առաջացնում է կոնկրետ իրավական հետևանքներ»: Նշված հակասությունը, ըստ Դիմողի, խաթարում է իրավունքի գերակայության սկզբունքը, քանի որ

իրավական նորմերի կիրառումը դառնում է անկայուն և անկանխատեսելի, իսկ անձի իրավական վիճակը՝ փոփոխական:

Դիմողը նշում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 15-րդ մասով նախատեսված իրավակարգավորումը բողոքարկման ընթացակարգի համատեքստում առաջացնում է իրավական որոշակիության սկզբունքի լուրջ խնդիրներ, որոնք անմիջականորեն ազդում են անձի իրավական վիճակի կանխատեսելիության վրա, և ստացվում է մի իրավիճակ, որ, անձի նկատմամբ դատական ակտով սահմանված փորձաշրջանի ժամանակահատվածից բացի, բողոքարկման ընթացակարգի ողջ ժամանակահատվածը, որը կարող է տարիներ տևել, փաստացի վերածվում է փորձաշրջանի:

Դիմողը գտնում է, որ գործող իրավակարգավորումների պայմաններում դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը կախված է ոչ միայն տվյալ անձի դատավարական վարքագծից, այլև նույն գործով այլ մեղադրյալների կամ դատավարության մյուս մասնակիցների կողմից բողոք ներկայացնելուց, ինչը հանգեցնում է այնպիսի իրավիճակի, երբ անձը փաստացի զրկվում է իր իրավական վիճակի վրա լիարժեք վերահսկողություն իրականացնելու հնարավորությունից, որի արդյունքում էլ իր նկատմամբ դատական ակտով սահմանված փորձաշրջանի ժամկետը այլ անձանց դատավարական գործողությունների շնորհիվ փաստացի կարող է անորոշ ժամանակով երկարել, այնուհետև ավելացնում է, որ փորձաշրջանը, որը պետք է ունենա հստակ և կանխատեսելի տևողություն, վերածվում է անորոշ ժամանակահատվածի՝ կախված արտաքին գործոններից, այդ թվում՝ այլ մեղադրյալների կամ դատավարության այլ մասնակիցների գործողություններից:

Դիմողն ընդգծում է, որ փորձաշրջանը՝ որպես քրեաիրավական ինստիտուտ, ուղղված է անձի վերասոցիալականացմանը և իրավաչափ վարքագծի խթանմանը, սակայն դրա արդյունավետ իրականացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ դրա ժամանակային սահմանները հստակ են և կանխատեսելի:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորման պայմաններում ձևավորվում է ոչ միայն իրավական անորոշություն, այլև անձի վրա գործադրվում է

անուղղակի, սակայն իրական ազդեցություն՝ ուղղված իր դատավարական իրավունքների իրացման սահմանափակմանը:

Դիմողը նշում է, որ իրավական հետևանքների առաջացման հնարավորության նախատեսումը՝ առանց անձի իրազեկվածության, հակասում է արդար դատաքննության հիմնարար սկզբունքներին: Միաժամանակ, ըստ Դիմողի, նման կարգավորումը խաթարում է նաև իրավական որոշակիության սկզբունքը, քանի որ անձը չի կարող կանխատեսել իր նկատմամբ կիրառվող իրավական հետևանքները՝ չլինելով տեղեկացված համապատասխան դատական ակտի գոյության և բովանդակության մասին:

Ըստ Դիմողի՝ իրավական որոշակիության և օրինականության սկզբունքներից անխուսափելիորեն բխում է նորմատիվ իրավական ակտերի կանխատեսելիության պահանջը, համաձայն որի՝ իրավահարաբերությունների սուբյեկտները պետք է հնարավորություն ունենան ողջամիտ սահմաններում կանխատեսելու իրենց վարքագծի հնարավոր իրավական հետևանքները:

Ամփոփելով՝ Դիմողը եզրակացնում է, որ «վիճարկվող իրավակարգավորումը, ստեղծելով անձի համար անկանխատեսելի և շփոթեցնող իրավական իրավիճակ, չի բավարարում Սահմանադրությամբ նախատեսված իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջներին և հակասում է օրինականության սկզբունքին»:

3. Ուսումնասիրության առարկա դարձնելով ներկայացված դիմումը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ

մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան:

Սահմանադրական դատարանը նշում է, որ դատարանների՝ սահմանադրական արդարադատություն հայցելու սահմանադրաիրավական իրավասությունն ամրագրված է Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասում.

«Դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով դիմում են Սահմանադրական դատարան, եթե հիմնավոր կասկածներ ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով»:

Վկայակոչված կարգավորումն ամրագրվել է Սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածում, որի շրջանակներում օրենսդիրն ուրվագծել է դատարանների սույն սահմանադրաիրավական իրավասության կենսագործման օրենսդրական հիմքերն ու ընթացակարգը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2024 թվականի հունիսի 18-ի ՍԴԱՈ-98 աշխատակարգային որոշմամբ վերահաստատել է, որ դատարանների դիմումների հիման վրա Սահմանադրական դատարանի կողմից կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում սահմանադրական արդարադատության իրականացման իմաստավորումը հանգում է դատարանի կողմից ենթադրյալ հակասահմանադրական նորմի հիման վրա կոնկրետ վեճի լուծումը կանխելուն, որպիսի պայմաններում հիմնարար նշանակություն է ձեռք բերում արդարադատություն իրականացնելու բացառիկ իրավասությամբ օժտված սույն սուբյեկտների կողմից ներկայացված դիմումների շրջանակներում, ի թիվս այլնի, վիճարկվող նորմի՝ Սահմանադրությանն անհամապատասխանությունը հիմնավորող այն պատճառաբանությունը ներկայացնելը, որը կբացահայտի դատարանի՝ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով «հիմնավոր կասկած» ունենալու սահմանադրական պահանջը:

Սահմանադրական դատարանը վերոնշյալ աշխատակարգային որոշմամբ ընդգծում է, որ դատարանի՝ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ «հիմնավոր կասկած» ունենալու սահմանադրական պահանջն անառարկելիորեն ենթադրում է դատարանների կողմից Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումի շրջանակներում խնդրո առարկա հարցի վերաբերյալ իրենց՝ ներքին համոզման հիման վրա ձևավորված դատողությունների և հիմնավորումների պատճառաբանված դիրքորոշումների ներկայացում, ընդ որում՝ ներկայացված դիրքորոշումները չպետք է սահմանափակվեն լոկ դատավարության/վարույթի համապատասխան մասնակիցների՝ սույն հարցի վերաբերյալ դիրքորոշումների վկայակոչմամբ կամ նման դիրքորոշումների շրջանակներում՝ առանց սեփական դատողությունների համակարգված շղթան ներկայացնելու, վիճարկվող նորմի կիրառման վերաբերյալ հարցերը դրա ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ դիտարկումների համատեքստում բարձրացնելով:

Սահմանադրական դատարանը 2021 թվականի նոյեմբերի 16-ի ՍԴԱՈ-224 աշխատակարգային որոշմամբ նշյալ հարցի վերաբերյալ արտահայտել է համարժեք դիրքորոշում, ըստ որի՝ «(…) Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով «հիմնավոր կասկածի» առկայությունը դատարանի կողմից հիմնավորված կարող է լինել, եթե դատարանի կողմից, ի թիվս դիմումին ներկայացվող այլ պայմանների, բավարար հիմնավորումներ են ներկայացվել առ այն, որ Սահմանադրական դատարանի ստուգմանն առաջադրվող նորմերի անորոշությունն անհնար է հաղթահարել՝ դատարանի կողմից իր լիազորությունների գործադրմամբ իրավական նորմի բավարար հստակությունն ապահովող սպառիչ դատական մեկնաբանություն տալով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող դատարանը պարտավոր է հիմնավորել, թե իր կողմից վիճարկվող իրավական նորմերի հստակության վերաբերյալ կասկածները փարատելու ուղղությամբ ինչպե՞ս է փորձել մեկնաբանել վիճարկվող իրավական նորմերը, և վիճարկվող նորմերի՝ իր կողմից մեկնաբանման մեթոդաբանական ողջ գործիքակազմի կիրառմամբ դրանք

ի՞նչ վերջնական իրավական բովանդակություն են ստացել՝ հիմնավորելով այդ բովանդակության անհամապատասխանությունը Սահմանադրությանը»:

Սահմանադրական դատարանն իր՝ 2022 թվականի մայիսի 6-ի ՍԴԱՈ-83 աշխատակարգային որոշմամբ փաստել է. «(…) *վիճարկվող նորմի սահմանադրականության վերաբերյալ դատավորի սուբյեկտիվ դիրքորոշումն արտահայտում է վերջինիս ներքին համոզմունքը, որը չի կարող հիմնվել սոսկ ենթադրությունների կամ չպատճառաբանված դատողությունների վրա, ուստի Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշումը պետք է բովանդակի վիճարկվող իրավադրույթի՝ Սահմանադրության համապատասխան հոդվածի համատեքստում ենթադրյալ հակասահմանադրականությունը հիմնավորող պատճառաբանությունների վերաբերյալ համապատասխան վերլուծություն, որը օբյեկտիվ հիմք է հանդիսացել դատավորի ներքին համոզմունքի ձևավորման համար»:*

Վերոգրյալի համատեքստում Սահմանադրական դատարանը փաստում է, որ դատարանների՝ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ կատարած ցանկացած հետևություն չէ, որ ընդգրկվում է Սահմանադրի կողմից Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասում ամփոփված «հիմնավոր կասկած» ունենալու սահմանադրական պահանջի բովանդակային սահմաններում, այլ այն պատճառաբանված դիրքորոշումները, որոնք հանգեցրել են նման հետևությանը. սա է Սահմանադրի անբեկանելի կամքը, որը սահմանադրականության հաստատման, սույն պարագայում՝ կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի ենթադրյալ հակասահմանադրական դրույթի կիրառման արգելակման առհավատչյան է:

Բացի դրանից, Սահմանադրական դատարանն իր՝ 2026 թվականի մարտի 20-ի ՍԴԱՈ-36 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ «(…) **«հիմնավոր կասկած» ունենալու սահմանադրաիրավական** պայմանի առկայությունը մեկնաբանելիս դատարանները պետք է հաշվի առնեն Սահմանադրական դատարանի՝

խնդրո առարկա հարցի առնչությամբ նախկինում արտահայտած դիրքորոշումները, ի մասնավորումն՝ Սահմանադրական դատարանն իր մի շարք աշխատակարգային որոշումներով ընդգծել է, որ **«հիմնավոր կասկած»** չի կարող համարվել նորմատիվ իրավական ակտի/վերջինիս դրույթի վերաբերյալ ցանկացած կասկած. **դատարանը պետք է համոզվի, որ դատական մեկնաբանությամբ անհնար է հաղթահարել կիրառման ենթակա նորմի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ հիմնավոր կասկածը:**

«Նման իրավիճակ կարող է առաջանալ այն պարագայում, երբ, օրինակ, վիճարկվող նորմը հնարավոր է մեկնաբանել միայն այնպես, որ այն իր վերջնական բովանդակությամբ հակասում է Սահմանադրությանը: Այդ դեպքում Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումում նշելով օգտագործված մեկնաբանման մեթոդները՝ դատարանը պարտավոր է հիմնավորել դատական մեկնաբանմամբ կիրառման ենթակա իրավական նորմի սահմանադրականության վերաբերյալ հիմնավոր կասկածը հաղթահարելու անհնարինությունը: (...)»»:

Սույն դիմումի ուսումնասիրությունից երևում է, որ Դիմողի՝ քրեական վարույթով ձևավորված համոզմունքն է այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 15-րդ մասը, որը հղում է անում նույն օրենսգրքի 75-րդ հոդվածով նախատեսված կարգով՝ դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելուն, առաջացնում է իրավական անորոշություն, որն, ըստ էության, պայմանավորված է ուժի մեջ չմտած դատավճիռը որպես համակցվող ակտ կիրառելով:

Այսպիսով, դիմումի ուսումնասիրությունը թույլ է տալիս Սահմանադրական դատարանին արձանագրել, որ վիճարկվող նորմի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ Դիմողի փաստարկները բավարար չափով հիմնավոր չեն, քանզի Դիմողը չի հիմնավորել վիճարկվող կարգավորումները Սահմանադրությանը համահունչ մեկնաբանելու անհնարինությունը, որպիսի հանգամանքը հանգեցնում է Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով «հիմնավոր կասկածի» բացառմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ Դիմողի՝ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ դիրքորոշումը **դատական մեկնաբանման միջոցով դատարանի որոշմամբ դատավարականացման ենթակա ներքին համոզմունքն է, այլ ոչ թե նման մեկնաբանության անհնարինությամբ պայմանավորված «հիմնավոր կասկած»՝** Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով, ուստի՝ սույն դիմումով առկա է գործի քննությունը մերժելու՝ Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 71-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 15-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

9 հունիսի 2026 թվականի
ՍԴԱՈ-102